ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՎԱՂԻՆԱԿԻ

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

**Ը.00.01 «Ընդհանուր տնտեսագիտություն»
մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թորոս Ծահենի Թորոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Գերասիմի Մնացականյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Բագրատ Արտաշեսի Ասատրյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. հուլիսի 8-ին, ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցե 0009, ք. Երևան Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2019թ. մայիսի 27-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ա.Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության ժամանակակից հատկանիշներից է գլոբալացման գործընթացը: Այն տարբեր ոլորտներում արտահայտվում է տարբեր ձևերով: Բնական է,որ խնդրի շուրջ ծավալվել են բազմաթիվ բանավեճեր,քանի որ գլոբալացման նպատակների և հնարավոր հետևանքների մասին միակարծություն գոյություն չունի: Բանավեճի հիմնական առարկան ազգային ինքնիշխանության պահպանման հարցն է:Քանի որ գլոբալացումն արտահայտվում է տարբեր ոլորտներում և իրենից ներկայացնում է ուսումնասիրության բավական ծավալուն առարկա, այս աշխատությունում մենք ուսումնասիրության թիրախ ենք ընտրել գլոբալացման ուղղություններից մեկը՝ բանկային գործունեության գլոբալացումը: Ինչպես որ գլոբալացման շուրջ ծավալվող բանավեճերի հիմնական թեման վերաբերում է ազգային ինքնիշխանության պահպանության հարցին,այնպես էլ բանկային գործունեության գլոբալացումը քննարկելիս առաջնային քննարկման հարց է երկրի ազգային բանկային համակարգի անկախությունը, որը դիտվում է որպես երկրի տնտեսական անվտանգության պահպանման հիմնական պայմաններից մեկը:

Գլոբալացման վերջնական նպատակների հարցը լուրջ քննարկումների առարկա է դարձել, որի շուրջ տարբեր կարծիքներ գոյություն ունեն: Պարզ է, որ գլոբալացման գործընթացն այլևս անշրջելի է, և հիմնական բանավեճերը ընթանում են այն ուղղությամբ,թե ինչպես է պետքայն օգտագործել, որպեսզի երկիրը կարողանա առավելագույն օգուտ քաղել դրանից՝ առանց իր ինքնիշխանությունը կորցնելու: Նմանապես, պարզ է, որ բանկերի միջազգային գործունեությունը հանդիսանում է երկրների զարգացման համար ամենաանհրաժեշտ գործիքներից մեկը: Եթե երկիրը չի ուզում լիովին ինքնամեկուսանալ մնացած աշխարհից,նա պետք է բանկային կապիտալ ներգրավի արտերկրից: Պարզապես այստեղ էլ խնդրո առարկա է դառնում այն, թե ինչպիսին պետք է լինի օտարերկյա բանկային կապիտալի դերը երկրի տնտեսությունում: Արդյո՞ք անհրաժեշտ է քվոտաներ սահմանել միջազգային բանկային խմբերի ներթափանցման վրա կամ որոշակիորեն սահմանափակել նրանց գործունեությունը:

Այսպիսի գործողությունների թե՛ կողմնակիցները,թե՛ընդդիմախոսները բերումեն տարբեր երկրների օրինակներ, որտեղ միջազգային բանկերը կա՛մ հաջողել են, կա՛մ ձախողվել:Սակայն հասկանալի է,որ այս տեսակի հարցերը քննարկելիս ընդհանրացումներ պետք չէ անել.անհրաժեշտէ դեպքերը ավելի մանրամասն դիտարկել հասկանալու համար, թե ինչպիսին կարող է լինել միջազգային բանկային գործունեության ազդեցությունը ազգային տնտեսությունների վրա:

Այստեղ, իհարկե, առաջնային խնդիր է այլ օրինակների հիման վրա պարզել,թե ինչպիսին է և ինչպիսին կարող է լինել միջազգային բանկային գործունեության ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա: Հայաստանի Հանրապետությունը գտնվում է կառուցվածքային փոփոխությունների նախաշեմին: Մեր երկրի հիմնական խնդիրներից է զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավումն արտասահմանից: Այդ խնդրի լուծման համար պետք է շարունակել Հայաստանի բանկային համակարգի ինտեգրումը համաշխարհային բանկային համակարգին:Սակայն վերջին տարիներին դժվար չէ նկատել, որ Հայաստանի բանկային համակարգը և հատկապես նրանում օտարերկրյա մասնակցությունը դարձել են բազմաթիվ քննարկումների առարկա, որոնք հաճախ միմյանց հակասում են: Մասնավորապես, բանկային կապիտալում օտարերկրյա կապիտալի ներկայությունը հաճախ ներկայացվում է որպես վտանգ, որը ժամանակի ընթացքում շուկայից դուրս կմղի տեղական կապիտալով բանկերին: Մյուս կողմից, ակնհայտ է այն փաստը, որ օտարերկրյա բանկային հաստատությունները Հայաստանում բավական թույլ ներկայացվածություն ունեն, այսինքն՝ Հայաստանում կա օտարերկրյա բանկային «որակյալ» կապիտալի ներգրավման խնդիր: Այդ խնդրի լուծումը կախված չէ միայն երկրի բանկային համակարգից և այն կարգավորող օրենսդրությունից:Այն առաջին հերթին կախված է երկրի ընդհանուր տնտեսական վիճակից և երկրում օտարերկրյա ներդրումներ ներգրավելու կարողությունից: Այսօր Հայաստանում տեղի ունեցող տնտեսական բարեփոխումները նպատակ ունեն երկիրը ավելի գրավիչ դարձնել օտարերկրյա ներդրումների համար,որոնք մեր երկրի բանկային համակարգի վրա կարող են ինչպես ուղղակի, այնպես էլ

անուղղակի ազդեցություն ունենալ: Ուղղակի ազդեցությունը վերաբերում է դեպի բանկային համակարգ հոսող օտարերկրյա կապիտալին, բանկերի բաժնետոմսերի ձեռքբերմանը, նոր բանկերի հիմնադրմանը և տեղական բանկերի միջոցով ծրագրերի ֆինանսավորմանը: Անուղղակի ազդեցությունը վերաբերում է այն ներդրումներին, որոնք խթանելու են տնտեսության մյուս հատվածների աճը,ինչն էլ իր հերթին բերելու է բանկային հատվածի ակտիվացմանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանի և այլ երկրների տնտեսությունների վրա բանկային գործունեության գլոբալացման ազդեցության ուսումնասիրությունն է՝ բացահայտելու համար,թե ինչպիսի քայլեր է պետք ձեռնարկել այդ գործընթացից առավելագույն արդյունք ստանալու համար: Այդ նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրվել են բանկային գործունեության գլոբալացման ֆենոմենը և դրա կապը ընդհանուր գլոբալացման գործընթացների հետ:
- Ուսումնասիրվել է գլոբալ բանկերի գործունեությունը, ինչպես նաև դրանց էվոլյուցիան:
- Վերլուծվել են միջազգային բանկերի տեղն ու դերը XXI դարում և դրանց կարևորության բարձրացումը վերջին երկու - երեք տասնամյակներում:
- Վերլուծվել է միջազգային բանկերի ազդեցությունն առանձին երկրների տնտեսությունների վրա, ուսումնասիրվել են ժամանակի ընթացքում հնչեցված տարբեր դեմ և կողմ կարծիքներ: Փորձ է արվել օբյեկտիվ գնահատականները ձևավորված կարծրատիպերից, որպեսզի հնարավոր լինի հարցի շուրջ հավասարակշռված տեսակետ ձևավորել:
- Օտարերկրյա բանկային կապիտալի ներգրավման տեսանկյունից մանրամասնորեն ուսումնասիրվել է Հայաստանի բանկային համակարգում տիրող իրավիճակը, բացահայտվել են առավելությունները և անկատարությունները:

- Վերլուծվել են Հայաստանում օտարերկրյա բանկային կապիտալի գործունեության առանձնահատկությունները, խնդիրները և հնարավորությունները:
- Դիտարկվել է բանկային գործունեության միջազգային համաձայնագրերից և Հայաստանի միջազգային ինտեգրացիոն գործընթացներում մասնակցությունից բխող կարգավորումների հնարավոր ազդեցությունը Հայաստանի զարգացման վրա:
- Դիտարկվել է Հայաստանի տնտեսական զարգացման գործում օտարերկրյա բանկերի հնարավոր մասնակցությունը:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի, ինչպես նաև՝ այլ երկրների բանկային համակարգերն են: Ուսումնասիրությունը ներառում է նաև Հայաստանի առևտրային բանկերը, ինչպես օտարերկրյա բանկային ինստիտուտների դուստրերը, և ուղղակի օտարերկրյա կապիտալով հայկական բանկերը: Ուսումնասիրության առարկան միջազգային բանկերի և օտարերկրյա բանկային կապիտալի գործունեությունն է, և դրա ազդեցությունը ազգային տնտեսությունների վրա:

Ուսումնասիրության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել մի շարք ականառու և ժամանակակից տնտեսագետների հիմնարար աշխատություններ, միջազգային կազմակերպությունների ներկայացրած հետազոտություններ և հաշվետվություններ, ինչպես նաև նրանց կողմից տրամադրած տվյալների բազաները: Հիմք են հանդիսացել նաև միջազգային բանկային գործունեությանը վերաբերող մի շարք հեղինակային հրապարակումներ, ոլորտին վերաբերող գործառույթներն ու ընթացակարգերը կարգավորող նորմատիվ բնույթի իրավական ակտեր: Հատկապես ուշադրություն է դարձվել այն հրապարակումներին, որոնք վերաբերում են զարգացող և անցումային տնտեսություններին: Տվյալների բավական լավ աղբյուր է հանդիսացել օտարերկյա մասնավոր և պետական կազմակերպությունների կայքերում հրապարակված տեղեկատվությունը:

Ատենախոսության համար տեղեկատվական աղբյուր են հանդիսացել Հայաստանի Կենտրոնական բանկը, Ազգային վիճակագրական ծառայությունը, Ֆինանսների նախարարությունը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել Հայաստանի տնտեսության և բանկային համակարգի շուրջ միջազգային կազմակերպությունների իրականացրած ուսումնասիրությունների վրա: Տեղեկատվության բազա են ծառայել առևտրային բանկերի պաշտոնական կայքերը և պարբերաբար հրապարակած հաշվետվությունները:

Հետազոտության ընթացքում իրականացվել են հաշվարկային, վիճակագրական, համեմատական և գործոնային վերլուծություններ:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսությունում կատարված վերլուծությունների և ուսումնասիրությունների միջոցով ստացվել են մի շարք արդյունքներ,որոնց գիտական նորույթը արտահայտվում է հետևյալում.

- Առաջարկվել է գլոբալացումը դիտարկել գլոբալացման գործընթացի գոյություն ունեցող երկու ուղղությունների տեսանկյունից: Այս մոտեցման համաձայն աշխարհում տեղի ունեցող գլոբալացման գործընթացները զարգանում են կա՛մ բնական՝ ինքնաբուխ գլոբալացման, կա՛մ արհեստական գլոբալացման ճանապարհներով: Հետազոտության ընթացքում ձեռք բերված արդյունքները գնահատվել են բնական և արհեստական գլոբալացումների միջև գոյություն ունեցող հակասությունների համատեքստում:
- Գնահատվել է օտարերկրյա բանկերի դերը ազգային տնտեսությունների զարգացման գործում: Մասնավորապես, ըստ տարբեր չափանիշների,խմբերի բաժանված երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են օտարերկրյա բանկերի ներկայությունից բխող դրական և բացասական արդյունքները: Դրանից ելնելով՝ բացահայտվել են օտարերկրյա բանկեր - երկրի տնտեսական քաղաքականություն կապի հետևանքները, որի արդյունքում ուղիներ են առաջարկվել

այդ կապը հնարավորինս արդյունավետ դարձնելու համար:

- Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են Հայաստանի բանկային համակարգի առավելություններն ու անկատարությունները, որպես օտարերկրյա բանկային կապիտալի ներգրավման հիմնական պայման: Հաշվարկվել են Հայաստանում օտարերկրյա բանկային համակարգի շահութաբերությունը և դրա դինամիկան վերջին մեկ ու կես տասնամյակի համար: Բացահայտվել է Հայաստանի բանկային համակարգին բնորոշ մի առանձնահատկություն. միջազգային բանկային հաստատությունների դուստր չհանդիսացող օտարերկրյա բանկերի գերակշռությունը միջազգային բանկերի դուստրերի նկատմամբ:
- Առաջարկվել է ապագայում ազգային բանկային համակարգի ինքնիշխանության պահպանման քաղաքականություն, որտեղ համաշխարհային մակարդակով կարգավորում և վերահսկողություն կատարող մարմինները (ինչպես Բանկային վերահսկողության բազելյան հանձնաժողովը) հակակշռում են տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումներին:
- Մշակվել է տնտեսության իրական հատված - բանկային համակարգ փոխկապակցվածությունը խորհրդանշող շղթա: Այդ շղթայի համատեքստում առաջարկվել են քայլեր, որոնք կնպաստեն տնտեսության իրական հատվածում բարեփոխումների շնորհիվ օտարերկրյա կապիտալ ներգրավել դեպի բանկային համակարգ: Միևնույն ժամանակ առաջարկվել են քայլեր, որոնց շնորհիվ օտարերկրյա բանկերը կնպաստեն տնտեսության իրական հատվածի զարգացմանը:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսությունում բանկային գործունեության գլոբալացմանը և Հայաստանում դրա կիրառությանը վերաբերող հիմնահարցերի տեսական դրույթների, դրանց վերաբերող տեղեկատվական նյութերի վերլուծությունների արդյունքները, ինչպես նաև ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել Հայաստանի գործադիր իշխանության և այլ գերատեսչությունների կողմից գլոբալացման

ընդհանուր համատեքստում Հայաստանի զարգացման ռազմավարությունները մշակելու ժամանակ: Հայաստանում օտարերկրյա բանկերի շահութաբերության ցուցանիշները, բանկային համակարգի վրա ազդող տնտեսության ինստիտուցիոնալ անկատարությունների մասին ներկայացված տվյալները, միջազգային բանկային հաստատությունների դուստրերի խնդիրների վերլուծությունը թույլ կտան երկրի զարգացման քաղաքականությունմշակելիս այդ խնդիրների արագ լուծմանն ուղղված քայլերն ավելի արդյունավետ դարձնել: Գործադիրի հատուկ ուշադրության առարկա կարող են դառնալ հատկապես բանկային համակարգի ինքնիշխանության պահպանման և տնտեսության իրական հատված - բանային համակարգ կապի արդյունավետության բարձրացման համար առաջարկված ուղիները:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումը: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Տնտեսագիտության տեսության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 142 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության տեսական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի նպատակը և խնդիրները, ինչպես նաև հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և կիրառման ուղղությունները:

Ատենախոսության առաջին՝ **«Բանկային գործունեության գլոբալացման էությունը, նախադրյալներն ու դրսևորման եղանակները»** գլխում փորձ է արվել բանկային գործունեության գլոբալացումը դիտարկել առաջին հերթին ընդհանուր գլոբալացման համատեքստում, քանի որ գլոբալացման մեկ մասի իրական ուսումնասիրությունը անհնար է, առանց ընդհանուրի բնույթը հասկանալու: Այնուհետև ուսումնասիրվել են, որպես բանկային գործունեության գլոբալացման արդյունք հայտեկած, միջազգային և դրանց մասհանդիսացող գլոբալ բանկերը: Մասնավորապես ուսումնասիրվել է վերջին տասնամյակներում այդ բանկերի ազդեցության բարձրացումը համաշխարհային տնտեսության վրա:

Գլոբալացման պայմաններում ազգային տնտեսությունների և համաշխարհային տնտեսության փոխհարաբերությունները որակական փոփոխություններ են կրել: Աշխարհի գրեթե բոլոր երկրների տնտեսական բացվածության մակարդակի աճը նպաստում է նրանց վրա էկզոգեն գործոնների ազդեցության ուժեղացմանը:

Մեր օրերում գլոբալացման գործընթացն այլևս իրականություն է և անշրջելի: Ինչպես որ անշրջելի է տնտեսության շուկայական մոդելի առավելության փաստը մյուս մոդելների նկատմամբ: Սակայն, ինչպես գիտենք, արդեն այդ համատեքստում գոյություն ունեն հակասություններ, մասնավորապես այնպիսի հարցերի շուրջ, թե ի՞նչ մեթոդներով պետք է շուկայական համակարգը ներդրվի, որտեղո՞վ է անցնում շուկան պետությունից բաժանող սահմանը, ո՞ր ոլորտները կարգավորել շուկայի օրենքներով և ո՞ր ոլորտները հեռու պահել շուկայից: Ընդհանուր առմամբ կողմ լինելով համաշխարհային տնտեսական համագործակցության սերտացմանը՝ երբ արդեն սկսում ենք քննել գլոբալացման իրագործման և վերջնական նպատակների հետ կապված հարցերը, տեսնում ենք լուրջ գաղափարական հակասություններ:[1] Ուսումնասիրելով այդ հակասությունները արտացոլող ժամանակակից գրականությունը՝ կարելի է առանձնացնել մի քանի աշխատություններ, որոնք թույլ կտան

[1] Truthout "Noam Chomsky on Globalization, Inequality and Political Alienation", 2016 - https://truthout.org/articles/noam-chomsky-on-globalization-inequality-and-political-alienation/

լավագույնս հասկանալ գլոբալացման գործընթացների էությունը: Այդ աշխատություններն են՝ Ջոզեֆ Ստիգլիցի «Գլոբալացումը և դրա բացասական կողմերը», Ռոնալդ Ֆինդլիի և Քևին Օ'Ռուրկի «Հզորություն և լիություն», Ջեֆրի Ֆրիդենի «Գլոբալ կապիտալիզմ. դրա անկումն ու թռիչքը XX դարում», Բարրի Այխենգրինի «Կապիտալի գլոբալացումը», Պիտեր Սինգերի «Մեկ աշխարհ», և Դանի Ռոդրիկի «Գլոբալացման պարադոքսը»: Այս, և մի շարք այլ աշխատություններում ներկայացված դեմ և կողմ փաստարկները ուսումնասիրելով՝ մենք հանգում ենք այն մտքին, որ գոյություն ունի գլոբալացման երկու տեսակ՝ բնական և արհեստական:Առավել պարզ կարելի է սահմանել ,որ բնական գլոբալացումը նշանակում է հեռավորության վերացում, իսկ արհեստական գլոբալացումը՝ սահմանների վերացում:Իսկ մեզ համար առաջնային խնդիր է գլոբալացման ամբողջ գործընթացում պահպանել ազգային պետությունը և պետական ինքնիշխանությունը:

Գլոբալացման գործընթացներին զուգահեռ համաշխարհային տնտեսության գլխավոր միտումներից կարելի է անվանել միջազգային բանկերի ուժեղացումը, և դրանց դերի բարձրացումը գլոբալացման ակտիվացման մեջ: Ընդհանրապես, միջազգային բանկերհասկացությունը բավականլայնէ,և այն առնվազը կարելի է բաժանել երկու տեսակի՝ գլոբալ բանկեր և տարածրջանային բանկեր: Գլոբալ բանկերը իրենց ազդեցությամբ գերազանցում են մի շարք երկրների: Այս բանկերի և ազգային տնտեսությունների բազում թելերով կապվածության պատճառով է,որ նրանց ձախողումը շատ հաճախ ամբողջ տնտեսության անկման է բերում,իսկ որոշ դեպքերում դանաև դոմինոյի էֆֆեկտ է առաջացնում ամբողջ գլոբալ տնտեսության համար (օրինակ՝ 2008 թ. գլոբալ ճգնաժամը):

Եթե ուսումնասիրենք աշխարհի խոշորագույն միջազգային բանկերն այսօր և տասը տարի առաջ, ապա կտեսնենք որ տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ ինչպես բանկերի դիրքերում, այնպես էլ՝ նրանց աշխարհագրությունում: 50 ամենախոշոր բանկերի կապիտալը տաս տարիների ընթացքում $59,968մլրդ-ից աճել է $72,466մլրդ:Առավել հետաքրքիր փոփոխություններ են տեղի ունեցել խոշոր բանկերի աշխարհագրության մեջ:

Գծապատկեր 1. Թոփ-100 միջազգային բանկերի աշխարհագրական տեղաբաշխումը (Համեմատական)[2]



Հետազոտությունները ցույց են տալիս, որ մի շարք բանկեր, վերջին տարիներին իրենց ազդեցությունը ավելացրել են հիմնականում էքսպանսիվ վարկավորման շնորհիվ: ԱՄՀ-ն այս առիթով իր անհանգստությունն է հայտնել, քանի որ նախկինում անկառավարելի վարկային բումները միշտ հանգեցրել են պայթյունների:[3] Բում – պայթյուն շրջանները (boom-bust circles) ավելի, բայց ոչ միշտ, բնորոշ են թույլ ինստիտուցիոնալ հենքեր ունեցող տնտեսություններին: Այդ պատճառով, երկրների համար շատ կարևոր է ինստիտուցիոնալ մակարդակի վրա ունենալ ճիշտ կարգավորումներ և ենթակառուցվածքներ: Միջազգային բանկերը կարող են հաստատվել նաև թույլ ինստիտուցիոնալ միջավայր ունեցող երկրներում: Սակայն այդ պայմաններում սպասվող դրական արդյունքները չեն լինի: Մասնավորապես օտարերկրյա բանկերը շուկայից դուրս կմղեն տեղական բանկերին, իսկ իրենք հենց կարող են ճգնաժամեր հարուցել կամ դրանք ներմուծել այլ երկրներից:[4]

Ատենախոսության երկրորդ՝ **«Ազգային տնտեսություններում օտարերկրյա կապիտալով գործող բանկերի մասնակցության վերլուծությունը»** գլխում ուսումնասիրվել է օտարերկրյա բանկերի ազդեցությունը առանձին

---

[2] Հիմք է ընդունվել "The world's 100 largest banks". Standard & Poor. April 6, 2018-ը

[3] S. Chen, J. Shik Kang “Credit Booms—Is China Different?”, IMF Working Paper, 2018 (pp 5-16)

[4] S. Ongena, A. Popov, “When the Cat’s Away the Mice Will Play: Does Regulation at Home Affect Bank RiskTaking Abroad?”, ECB, Working paper series, Frankfurt am Main, 2013, (pp 8-15)

երկրների տնտեսությունների վրա: Մանրակրկիթ հետազոտության են ենթարկվել այս հարցին վերաբերող ամենատարածված դեմ և կողմ փաստարկները: Հետագայում, երկրների ցանկից ընտրվել է մեկ երկիր՝ Հայաստանի Հանրապետությունը, որի բանկային համակարգը ենթարկվել է առավել մանրամասն վերլուծության: Մասնավորապես ուսումնասիրվել է երկրի բանկային համակարգը, նրա առավելությունները և խոցելիությունները օտարերկրյա բանկային կապիտալի տեսանկյունից: Առանձին ուսումնասիրվել են նաև երկրում արդեն գործող օտարերկրյա բանկային կապիտալի առանձնահատկությունները:

Ուսումնասիրվել են հարյուրից ավելի երկրների բանկային համակարգեր, իսկ ուսումնասիրության առարկա է հանդիսացել օտարերկրյա նշանակալի կապիտալով (բաժնետոմսերի 50% և ավելի) գործող բանկերի քանակը բանկերի ընդհանուր քանակի մեջ, ինչպես նաև օտարերկրյա նշանակալի կապիտալով բանկային ակտիվների բաժինը ընդհանուր բանկային ակտիվների մեջ: երկրների բանկային համակարգերում օտարերկրյա բանկերի ներկայության վերաբերյալ վերջին լուրջ հետազոտությունները տեղի ունեցել 2014թ.[5]:

Ի հարկե այդ ժամանակներից սկսած՝ երկրների բանկային համակարգերում մի շարք փոփոխություններ են տեղի ունեցել: Փոփոխվել են օտարերկրյա բանկային կապիտալի ցուցանիշները ազգային բանկային համակարգերի մեջ: Այդ պատճառով մենք որոշել ենք երկրները ներառել հինգ խմբերի մեջ՝ A, B, C, D, E՝ հաշվի առնելով, որ օտարերկրյա կապիտալի ցուցանիշների տատանումները հիմնականում տեղի ունենում այդ խմբերի ներսում: Ի հարկե կան նաև առանձին դեպքեր, երբ երկիրը տեղափոխվել է մեկ խմբից մյուս: Այդ թվում նաև Հայաստանը, որը Eխմբից տեղափոխվել է Cխումբ:

A խմբի մեջ ներառվել են այն երկրները, որոնց բանկային համակարգերում օտարերկրյա բանկերի ակտիվների բաժինը կազմում է 0%-20%, B խմբի մեջ՝ 20%-40%, Cխմբի մեջ՝ 40%-60%, Dխմբի մեջ՝ 60%-80%, E խմբի մեջ՝ 80%-100%:

[5] S. Claessens N. van Horen "Database on bank ownership", IMF Economic Review, 2015 - https://www.dnb.nl/.../CvH%20Bank%20Ownership%20Database_1995-2013-FINAL

Աղյուսակ 1. Երկրների խմբավորվածություն՝ ըստ բանկային ակտիվներում օտարերկրյա բանկերի ակտիվների մեծության (%)

Aխումբ
Մարոկկո,Նիգերիա,Դանիա,Վենեսուելա,Մալազիա, Բոլիվիա,Ալժիր,Բրազիլիա,Կոլումբիա,Նորվեգիա, Թուրքիա,Մեծ Բրիտանիա,Գերմանիա, Ղազախստան,Էկվադոր,Նեպալ,Օման,ԱՄՆ,Դոմին.Հան., Ռուսաստան,Քուվեյթ,Հարավային Կորեա,Թայլանդ, Իտալիա,Ֆրանսիա,Վիետնամ,Ադրբեջան, Նիդերլանդներ,Բանգլադեշ,Կանադա,Հնդկաստան, Ավստրալիա,Չինաստան,Շվեյցարիա,Ֆիլիպիններ, ԱՄԷ,Կուբա,Եթովպիա,Հունաստան,Հաիթի,Իսլանդիա, Իրան,Իսրայել,Լիբիա,Կատար,Սաուդյան Արաբիա,Շրի Լանկա,Ճապոնիա,Շվեդիա,Եմեն:
Bխումբ
Իռլանդիա,Քենիա,Մալավի,Չիլի,Բելառուս, Գվատեմալա,Ուկրաինա,Ինդոնեզիա,Մոլդովա, Ավստրիա,Կոստառիկա,Արգենտինա,Հորդանան, Սլովենիա,Պորտուգալիա,Հարավային Աֆրիկա, Եգիպտոս:
Cխումբ
Լատվիա,Հունգարիա,Մավրիկիոս,Անգոլա, Հոնդուրաս,Բահրեյն,Նամիբիա,Պակիստան, Պարագվայ,Պերու,Բելգիա,Տանզանիա,Հայաստան (2018):
Dխումբ
Ղրղզստան,Բոտսվանա,Լեհաստան,Սերբիա,Սլովակիա, Բուրունդի,Մեքսիկա,Մակեդոնիա,Վրաստան, Բուլղարիա:
Eխումբ
Բարբադոս,Սալվադոր,Մադագասկար,Սվազիլենդ, Զամբիա,Էստոնիա,Մոզամբիկ,Նոր Զելանդիա, Հոնկոնգ,Լյուքսեմբուրգ,Ուրուգվայ,Ճամայկա, Լիտվա,Հորվաթիա,Ալբանիա,Մոնտենեգրո,Բոսնիա և Հերց.,Չեխիա,Ուգանդա,Ֆինլանդիա:

Մի շարք հեղինակների աշխատություններում, մասնավորապես՝ Ա. Բարախասի, Հ. Դե Գրիզի, Մ.

Ջիանետտիի և այլք, ապացուցվում է այն ենթադրությունը, որ զարգացող երկրներում օտարերկրյա բանկերի ներկայության ընդլայնումը բերում է այդ երկրներում տոկոսադրույքների անկմանը, վարկային ռեսուրսների ալոկացիայի բարելավմանը, ինչպես նաև տեղական վարկային կազմակերպությունների և ազգային բանկային համակարգերի աշխատանքի էֆֆեկտիվության բարձրացմանը:

Դա երևում է նաև մերուսումնասիրություններից: Մենք վերցրել ենք անցումային, յոթ արևելաեվրոպական երկրներ՝ Լեհաստան, Չեխիա, Հունգարիա, Սլովակիա, Էստոնիա, Լիտվա, Լատվիա, և երկու նախկին հարավսլավական՝ Հորվաթիա, Սլովենիա, և դիտարկել ենք այն ժամանակահատվածը (2000-ականների սկիզբ), երբ օտարերկրյա վերահսկողությամբ բանկերի քանակը և դրանց ակտիվների մեծությունը այդ երկրների բանկային համակարգերի ընդհանուր ակտիվների մեջ սկսեցին որակական աճ արձանագրել:

Գծապատկեր 2. Օտարերկրյա նշանակալի մասնակցությամբ բանկերի քանակի և վարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճը անցումային տնտեսությամբ ինը երկրներում 1999-2009 (%)[6]



Սակայն, այն թեզը, թե զարգացած երկրների բանկային կազմակերպությունները, որոնք գործում են զարգացող երկրներում, ավելի արդյունավետ են աշխատում, քան իրենց տեղացի մրցակիցները, մասնագիտական գրականության մեջ միանշանակ աջակցություն չի ստանում:

[6] Հիմք են ընդունվել The World Bank. “Global financial development database” July 2018 - pubdocs.worldbank.org/en/.../July-2018-global-financial-development-database.xlsx.-ի տվյալների վրա:

Գոյություն ունեն մի շարք աշխատություններ, որոնք պաշտպանում են դասական մոտեցումը, սակայն կան նաև հետազոտություններ, որոնք ցույց են տալիս,որ որոշ երկրներում (հատկապես լատինամերիկյան) օտարերկրյա բանկերի «դուստրերի» և տեղական բանկերի արդյունավետության ցուցանիշները այնքան էլ շատ չեն տարբերվում:[7]

Այս ամենը ցույց է տալիս, որ օտարերկրյա բանկի ներկայությունը դեռևս բավարար պայման չէ,որպեսզի այն արդյունավետ գործի:Միևնույն տնտեսական հաջողությունները և անկումները կարող են տեղի ունենալ ինչպես օտարերկրյա բանկերի նշանակալի ներկայությամբ երկրներում, այնպես էլ օտարերկրյա բանկերի սահմանափակ ներկայությամբ երկրներում: Տարբեր երկրների փորձը ուսումնասիրելով՝ պարզ է դառնում, որ երկրի տնտեսական զարգացումը առաջին հերթին կախված է այդ երկրի կողմից վարած տնտեսական քաղաքականության որակից:Իսկ օտարերկրյա բանկերը թե՛ լավ,թե՛ վատ տնտեսական քաղաքականության դեպքում ստանձնում են գործընթացների արագացուցիչի դերը: Լավ տնտեսական քաղաքականության դեպքում օտարերկրյա բանկերը նպաստում են տնտեսական աճին, իսկ վատ տնտեսական քաղաքականության դեպքում, ընդհակառակը, նպաստում են ճգնաժամերի առաջացմանը և իրավիճակի վատթարացմանը:

Եթե համեմատենք Հայաստանի բանկային համակարգը տնտեսության այլ ճյուղերի հետ,ապա կարող ենք ասել,որ այն մեր երկրի տնտեսության ամենակայացած կառույցն է, որն անընդհատ բարեփոխումների է ենթարկվում միջազգային չափանիշներին համապատասխանելու համար: Հայաստանի բանկային համակարգի դրական կողմերից մեկն այն է,որ այն գերկենտրոնացած չէ:Այսինքն չենք կարող ասել,որ այս կամ այն բանկը շուկայում որոշիչ դեր է խաղում:Այդպիսի բանկերին սովորաբար անվանում են «To big to fail» (չափազանց մեծ՝ ձախողելու համար):

Անդրադառնալով Հայաստանի բանկային համակարգի խնդիրներին և վտանգներին՝կարելի է ասել, որ այսօր նրա ամենամեծ խնդիրներից է համակարգի չափից ավել դոլարացումը:

[7] R. Correa “Cross-border Bank Acquisitions: Is there a Performance Effect?”, Board of Governors of the Federal Reserve System. International Finance Discussion Papers, № 922, 2008, (pp 8-13)

Հայաստանի բանկային համակարգի խնդիրներից է, բանկերի ցածր շահութաբերությունը: 2007-2017 թթ. միջև, երբ բանկային համակարգի համախառն ակտիվները ՀՆԱ 24.3%-ից աճեցին 78.2%, իսկ բանկային կապիտալը առավել քան կրկնապատկվեց, հայկական բանկերի համախառն շահույթը հիմնականում մնաց հաստատուն (չհաշված անկումները) և դեռևս չի հաջողվել գերազանցել 2012 թ. ցուցանիշը:[8] 2019 թ. դրությամբ Հայաստանի բանկային համակարգը ինստիտուցիոնալ առումով գտնվում է բավական բարձր մակարդակի վրա: Եթե մանրամասն ուսումնասիրենք ֆինանսական համակարգի գնահատման ծրագրի (FSAP)՝ Հայաստանի ֆինանսական հատվածին վերաբերող զեկույցը, ապա կտեսնենք, որ Կենտրոնական բանկին ուղղված բոլոր խորհուրդներն ու հորդորներն ուղղված են բանկային հատվածից դուրս տեղի ունեցող զարգացումներից բանկերին համապատասխան միջոցներով պաշտպանելուն ու ապահովագրելուն:[9]

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկն 2014 թ. վերջին առևտրային բանկերի համար վեց անգամ բարձրացրեց բանկերի մինիմալ կապիտալի պահանջը: 2017 թ. չորս բանկեր, որոնցից երեքը օտարերկրյա բանկերի մասնաճյուղեր, միաձուլվեցին հայկական բանկերի հետ: Այս գործընթացների արդյունքում նկատվում է Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա մասնակցության նվազում:

Գծապատկեր 3. Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնաբաժնի, օտարերկրյա բանկերի քանակի, ակտիվների փոփոխությունները (%)[10]

[8] Հաշվարկվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալների հիման վրա:

[9] IMF “Financial System Stability Assessment—Pressrelease”, Staff Report and Statement By The Executive Director For The Republic Of Armenia, December 2018.

[10] Հաշվարկվել է Համաշխարհային բանկի "July 2018 Financial stabiliy database"-ի և ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների հիման վրա



Այս տվյալներին նայելով՝ հնարավոր է տպավորություն ստեղծվի, որ տեղի է ունենում Հայաստանից օտարերկրյա բանկերի: Սակայն, եթե նորից դիտարկենք նախորդ ենթագլխում ներկայացված տվյալները, ապա կհասկանանք, որ խոսքը գնում է բանկային կապիտալի որակի բարձրացման մասին:Հայաստանյան 17բանկերից 15-ը ունեն առնվազն մեկ օտարերկրացի բաժնետեր:Իսկ բանկերից 10-ում բաժնետոմսերի մեծամասնությունը պատկանում է օտարերկրյա ռեզիդենտներին, այսինքն՝ այդ բանկերը կարող ենք համարել օտարերկրյա: **Գծապատկեր 4.** Օտարերկյա բանկերի ազգությունը և դրանց գումարային (եթե մեկ բանկից ավելի է) ակտիվների բաժինը ընդհանուրի մեջ .2018թ .[11]



Հայաստանում գործող օտարերկրյա 10 բանկերից միայն չորսն են հանդիսանում միջազգային բանկերի դուստրեր:

Մենք փորձել ենք հաշվարկել հայաստանյան բանկերում օտարերկրյա կապիտալի

[11] Հաշվարկվել է «KPMG, Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն, 2018Q4»-ի հիման վրա

շահութաբերությունը, որպեսզի տեսնենք՝ ինչպիսին է եղել նախկինում, ինչպիսին է հիմա հասկանալ, թե ինչ ուղղություններով այն կարող է զարգանալ: Հայաստանի բանկերի օտարերկրյա բաժնետերերի շահույթը հաշվելու համար պետք է օգտագործենք հետևյալ բանաձևը.

$$Շ_{ՕԿ} = Շ_{ՀԲ} x ՄԲ_{ՕԿ}$$

Որտեղ $Շ_{ՕԿ}$ - ը Հայաստանի բանկերում օտարերկրյա բաժնետերերի շահույթն է, $Շ_{ՀԲ}$ - ը Հայաստանի բանկերի շահույթն է, իսկ $ՄԲ_{ՕԿ}$ - ը օտարերկրյա կապիտալի մասնաբաժինն է հայաստանյան բանկերում:

Բացարձակ թվերով հաշվելու դեպքում, տեսնում ենք, որ դիտարկվող ժամանակի սկզբից մինչ օրս օտարերկրյա բաժնետերերի շահույթը աճել է շուրջ ութ անգամ: Սակայն, պետք է հաշվի առնենք որ այդ ժամանակահատվածում աճել են նաև առևտրային բանկերի կանոնադրական կապիտալները: Այդ դեպքում անցնում ենք վերջին քայլին, այն է օտարերկրյա կապիտալի շահութաբերության (արդյունավետության) հաշվարկին: Դա հաշվարկելու համար պետք է օտարերկրյա բաժնետերերի բաժին շահույթը հարաբերենք կանոնադրական կապիտալում օտարերկրյա կապիտալի մեծության վրա:

$$ՇԲ_{ՕԿ} = (Շահույթ_{ՕԿ} / Կապիտալ_{ՕԿ}) x 100$$

Հաշվարկը կատարելուց հետո ստանում ենք հետևյալ պատկերը.

Գծապատկեր 5. Հայաստանի բանկերում օտարերկրյա կապիտալի շահութաբերությունը **2002-2017թթ. (%).**



Բացի 2004թ.,Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի շահութաբերությունը երբեք 20%-ից բարձր չի եղել:

Ատենախոսության երրորդ՝ **«Հայաստանի բանկային համակարգի զարգացման և անկախության պահպանման ուղիները գլոբալացման պայմաններում»** գլխում դիտարկվում է երկու հիմնական հարց՝ ինչպե՞ս պահպանել Հայաստանի բանկային համակարգի անկախությունը գլոբալացման պայմաններում, և թե ինչպես օտարերկրյա բանկերը կարող են նպաստել Հայաստանի տնտեսական զարգացմանը:

Բազել III-ի ստանդարտների ներդրումը կհանգեցնի ոչ միայն Հայաստանի բանկային համակարգի կայունության ամրապնդմանն ու անվտանգության բարձրացմանը, այլև կնպաստի համաշխարհային բանկային համակարգին հայկական բանկերի ինտեգրվելու գործընթացին: Տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումներին անդամակցելիս երկրին հարկավոր է նախօրոք սահմանել այն «կարմիր գիծը», որը թույլ կտա փոխշահավետ համագործակցությունը տարանջատել ինքնիշխանության կորստից: Փոխշահավետ համագործակցությունը ներառում է կարգավորումների և պայմանների մոտեցում, որը երկրներին թույլ է տալիս իրենց տնտեսական փոխհարաբերությունները ծավալել «խաղի» ընդհանուր կանոնների շրջանակում: Սակայն, երբ խոսքը տարածաշրջանային միասնական վերահսկող և կառավարող ինստիտուտների ստեղծման մասին է, ապա այստեղ արդեն գործ ունենք երկրի ինքնիշխանության սահմանափակման հետ: Մեր կարծիքով, մեր կողմից հավանության արժանացած բնական գլոբալացմանը ավելի շատ համապատասխանում են գլոբալ մակարդակում ընդունված կարգավորումները և համաձայնագրերը, որոնք հենց հաստատում են «խաղի» միասնական կանոններ՝ առանց տարբեր երկրների տնտեսական ինստիտուտների միաձուլումը պարտադրելու: Բազել III-ը այդ տեսակի համաձայնագրերի լավագույն օրինակներից է:

Ինչ վերաբերում է օտարերկրյա բանկերի մասնակցությանը Հայաստանի տնտեսության զարգացման գործին, ապա պետք է նշել որ այն տեղի է ունենալու տնտեսության իրական հատվածի - բանկային համակարգ շղթայի ակտիվացման

շնորհիվ: Իսկայդ շղթայի ակտիվացումը կապված է տնտեսության ազատականացման և ապաստվերայնացումից:

Գծապատկեր 6. Տնտեսություն իրական հատված - բանկայինհամակարգ շղթա



Եթե ուզում ենք իմանալ, թե ինչպիսին է լինելու օտարերկրյա ծագումով բանկերի գործունեության ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա, ապա պետք է անդրադառնանք ոչ վաղ անցյալում համադրելի երկրների փորձին: Մեր կարծիքով Հայաստանի հետ զուգահեռներ անցկացնելու համար ամենահավանական թեկնածուները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) նախկին սոցիալիստական երկրներն են: Հատկապես այն ժամանակահատվածում, երբ այդ երկրները դեռևս ԵՄ անդամ չէին հանդիսանում, սակայն նրանց տնտեսություններում օտարերկրյա բանկերի դուստրերը արդեն լուրջ ակտիվություն էին ծավալում: Այդ երկրների օրինակների էմպիրիկ ովերլուծությունները ցույց են տալիս, որ օտարերկրյա բանկերի մուտքը այլ պետությունների շուկա դրական ազդեցություն է ունենում ՓՄՁ-ների զարգացման վրա:[12]

Ատենախոսության «**Եզրակացություն**» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, որոնք են՝

• Գլոբալացումը անշրջելի է, բայց այն միանշանակ ընդունվող երևույթ չէ, և նրա առաջացրած հետևանքների շուրջ ի հայտ են եկել բավական լուրջ հակասություններ: Մեր

[12] Форст О.С. «Иностранные Банки в Экономиках Стран Центральной и Восточной Европы», Москва, 2011 г. (сс 43-55)

կարծիքով գոյություն ունի երկու տեսակի գլոբալացում:

• Գլոբալ բանկերի դերի բարձրացումը համաշխարհային տնտեսության մեջ կապված է բանկային և արդյունաբերական կապիտալի կենտրոնացման հետ, որը ժամանակակից տնտեսական հարաբերությունների մեջ հանդիսանում է կարևոր միտում: Գլոբալ տարածում և գլոբալ ազդեցություն ունեցող բանկերի ակտիվության բարձրացումը հետզհետե ավելի ակտուալ դարձրեց դրանց կարգավորման հարցը:

• Մտահոգություններ են ստեղծվում, որ միջազգային բանկերի ակտիվացումը հանգեցնելու է զարգացող երկրների կախվածության աճին զարգացած երկրներից:Բայց միջազգային բանկերից խուսափելուց առաջ պետք է հիշել, որ այդ բանկերը և դրանց ծագման երկրները բավական հաճախ իրար մրցակիցներ են հանդիսանում,և կախվածությունից խուսափելու հիմնական միջոցը երկրի ներսում մրցակցության համար հարմարավետ միջավայր ստեղծելն է:

• Տնտեսական հաջողություններ և անկումներ կարող են լինել ինչպես օտարերկրյա բանկերի մեծ, այնպես էլ փոքր ներկայությամբ երկրներում:Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս,որ երկրի տնտեսական զարգացումը առաջին հերթին կախված է այդ երկրի վարած տնտեսական քաղաքականությունից:

• Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա մասնակցությունը, ի տարբերություն բազմաթիվ այլ երկրների,ունի իր առանձնահատկությունները: Եթե դիտարկում ենք այլ երկրների փորձը,ապա տեսնում ենք,որ հիմնականում դա կապված է միջազգային կամ գլոբալ տարածում ունեցող բանկային ինստիտուտների հետ:Իսկ Հայաստանում մեծ դեր է խաղում օտարերկրյա բանկերի չներկայացնող սփյուռքահայ կապիտալը:

• Ուսումնասիրություններից նաև պարզ դարձավ, որ բանկային համակարգում հաճախ ազգային խնդիրները կարող են դառնալ միջազգային: Այդ պատճառով էլ անհրաժեշտություն է առաջանում «խաղի» միասնական կանոններ հաստատել: Այդպիսի կանոնները գլոբալ մակարդակում հաստատում է

Բանկային վերահսկողության բազելյան հանձնաժողովը: Սա մենք համարում ենք բնական գլոբալացման ձևերից մեկը: Սրան հակադրվում է տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների կողմից հաճախ իրականացվող բանկային համակարգերի ինտեգրման և կենտրոնացման քաղաքականությունը:

• Ընդհանուր զարգացման գործընթացի արագացումը մեծապես կախված է տնտեսության իրական հատված - բանկային համակարգ կապը ապահովող շղթայից: Համաձայն այդ շղթայի աշխատանքի տրամաբանության, տնտեսական ակտիվության ավելացումը բերելու է բանկային համակարգի ակտիվացմանը և հետևաբար շահույթների ավելացմանը: Դա իր հերթին նպաստելու է բանկային համակարգում օտարերկրյա ներդրումների ավելացմանը, ինչը իր հերթին նպաստելու է տնտեսական ակտիվության նոր ավելացման, և այդպես շարունակ:

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրվել են հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Բաղդասարյան Վ. **«Միջազգային բանկային բիզնեսի հիմնական գործառնությունների և դրանց կարգավորման ուղիների ուսումնասիրությունը»**. *«Ֆինանսներ և էկոնոմիկա», #11-12 (207-208), 2017, (էջ 16-17)*

2. Բաղդասարյան Վ. **«Օտարերկրյա կապիտալով գործող բանկերի ներկայության ուսումնասիրությունը տարբեր երկրների տնտեսություններում»**. *«Ֆինանսներ և էկոնոմիկա», #11-12 (207-208), 2017, (էջ 18-20)*

3. Բաղդասարյան Վ. **«ՀՀ բանկային համակարգի վիճակի ուսումնասիրությունը ընդհանուր տնտեսական իրավիճակի համատեքստում»**. *«Ֆինանսներ և էկոնոմիկա», #1-2 (209-210), 2018, (էջ 39-41)*

4. Բաղդասարյան Վ. **«Հայաստանի Հանրապետության արտաքին ֆինանսավորումը միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից»**. *«Մխիթար Գոշ» գիտական և ուսումնամեթոդական հոդվածներ, տարեգիրք 2018, (էջ 413-417)*

5. Բաղդասարյան Վ. **«Օտարերկրյա կապիտալի մասնակցությունը ՀՀ բանկային համակարգի գործունեության մեջ»**. *«Մխիթար Գոշ» գիտական և*

ուսումնամեթոդական հոդվածներ, տարեգիրք 2018. (էջ 418-421)

6. Բաղդասարյան Վ. **«Բանկային գործունեության գլոբալացման դրական և բացասական կողմերի վերլուծությունը»**. *«Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, հատոր X, No 3, 2019, (էջ 96-102)*

БАГДАСАРЯН ВАРДАН ВАГИНАКОВИЧ

ВЛИЯНИЕ ГЛОБАЛИЗАЦИИ БАНКОВСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ НА НАЦИОНАЛЬНЫЕ ЭКОНОМИКИ (НА ПРИМЕРЕ АРМЕНИИ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: Ը.00.01 – “Обшая экономика”.

Защита диссертации состоится 8-го июля 2019г. в 15:00 часов на заседании Специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете. Адрес: 0009, ул. Абовяна 52, г. Ереван, Республика Армении.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению процессов связаных с глобализацией банковской деятельности, а также определению степени влияния этих процессов на национальные экономики, и в частности на экономику Армении.

Основным объектом исследования диссертации является банковская система Армении, а также банковские системы других стран. А предметом исследования являются международные банки и иностранный банковский капитал в целом.

Основная цель диссертации - изучить влияние глобализации банковской деяельности на экономики Армении и других стран, чтобы выяснить, какие шаги необходимо предпринять, чтобы получить максимальную отдачу от этого процесса.

Для достижения этой цели в диссертации были поставлены и решены следующие задачи:

• Изучить явление глобализации банковской деятельности и ее связь с общими процессами глобализации.

• Изучить деятельность глобальных банков, а также их эволюцию.

• Проанализировать роль международных банков в XXI веке, и их значение в последние два-три десятилетия.

• Проанализирать влияние международных банков на экономику отдельных стран.

• Изучить банковскую систему Армении с точки зрения привлечения зарубежного капитала

• Проанализировать особенности, недостатки и возможности зарубежных банковских операций в Армении.

• Определить влияние международных регулирующих механизмов на банковскую систему Армении.

• Определить степень участие иностранных банков в экономическом развитии Армении.

В ходе иследования получены результаты методической и практической значимости, из которых научную новизну содержат следующие:

• Было предложено рассмотреть глобализацию с точки зрения двух существующих тенденций. Согласно этому подходу процессы глобализации в мире развиваются либо в результате естественной, стихийной глобализации, либо посредством искусственной глобализации.

• Оценена роль иностранных банков в развитии национальных экономик. В связи с этим были выявлены последствия связи деятельности иностранных банков с экономической политикой страны, и предложены пути чтобы сделать эту связь максимально эффективной.

• В результате исследования преимуществ и недостатков банковской системы Армении, были определены основные условия для привлечения иностранного капитала. Выявлена одна особенность банковской системы Армении: доминирование зарубежных банков, не связанных с международными банковскими учреждениями, над дочерними банками международных банков.

• Была предложена политика сохранения суверенитета национальной банковской системы в будущем, когда глобальные регулирующие и надзорные органы (такие как Базельский комитет банковского надзора) противопоставляются региональным интеграционным ассоциациям.

• Предложена концепция цепочки банковский сектор – реальный сектор экономики. В контексте этой цепочки были предложены шаги, которые будут способствовать привлечению иностранного капитала в банковскую систему посредством реформ в реальном секторе экономики. В то же время были предложены шаги, позволяющие иностранным банкам продвигать реальный сектор экономики.

Представленные в диссертации оценки ситуации, проведенное исследование и представленные иследования имеют практическое значение, и могут быть основой для определения будущей политики.

BAGHDASARYAN VARDAN

THE EFFECT OF GLOBALIZATION OF BANKING ON NATIONAL ECONOMIES (EXAMPLE OF ARMENIA)

The abstract of the dissertation for pursuing the degree of PhD in Economics in the field Ը .00.01 – ''General Economics''

The defense of the dissertation will take place on July 8, 2019 at 15:00 at the meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan Str., Yerevan, 0009, Republic of Armenia.

ABSTRACT

The thesis is devoted to the study of the processes associated with the globalization of banking activities, as well as to determine the degree of influence of these processes on national economies, and in particular on the economy of Armenia.

The main object of research of the dissertation is the banking system of Armenia, as well as the banking systems of other countries. The subject of the research is international banks and foreign bank capital in general.

The main goal of the dissertation is to study the impact of the globalization of banking on the economies of Armenia and other countries in order to find out what steps need to be taken in order to get the most return from this process.

To achieve this goal, the following tasks were set and solved in the thesis:

• To study the phenomenon of the globalization of banking activities and its relationship with the general processes of globalization.

• To study the activities of global banks, as well as their evolution.

• Analyze the role of international banks in the 21st century, and their significance in the last two or three decades.

• Analyze the impact of international banks on the economy of individual countries.

• To study the banking system of Armenia in terms of attracting foreign capital

• Analyze the features, disadvantages and possibilities of foreign banking operations in Armenia.

• Determine the influence of international regulatory mechanisms on the banking system of Armenia.

• To determine the degree of participation of foreign banks in the economic development of Armenia.

In the course of the research, the results of methodological and practical significance are obtained, of which the following are the scientific innovations:

• It was proposed to consider globalization in terms of two existing trends. According to this approach, globalization processes in the world are developing either as a result of natural, spontaneous globalization, or through artificial globalization.

• The role of foreign banks in the development of national economies has been evaluated. In this regard, the consequences of the connection of the activities of foreign banks with the country's economic policy were identified, and ways were proposed to make this relationship as efficient as possible.

• As a result of a study of the advantages and disadvantages of the banking system of Armenia, the main conditions for attracting foreign capital were identified. One feature of the banking system of Armenia is revealed: the dominance of foreign banks not affiliated with international banking institutions over the subsidiary banks of international banks.

• A future policy was proposed to preserve the sovereignty of the national banking system, when global regulatory and supervisory bodies (such as the Basel Committee on Banking Supervision) are opposed to regional integration associations.

• The concept of a chain of banking sector - the real sector of the economy. In the context of this chain, steps were proposed that would facilitate the attraction of foreign capital into the banking system through reforms in the real sector of the economy. At the same time, steps were proposed that allow foreign banks to promote the real economy.

The assessments of the situation presented in the dissertation, the research conducted and the research presented are of practical significance and can be the basis for determining future policies.